

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

ք. Երևան

19 նոյեմբերի 2008 թվականի

Նախագահում էր՝

Տ. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

- Վ. Ներսիսյանց - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, գործարարության աջակցման խորհրդի փոխնախագահ
- Տ. Դավթյան - ՀՀ ֆինանսների նախարար
- Մ. Սարգսյան - ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ
- Ռ. Հարությունյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, գործարարության աջակցման խորհրդի քարտուղար
- Գ. Արզումանյան - «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Ա. Մկրտչյան - «Ամերիա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Է. Գրիգորյան - «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ
- Զ. Հարությունյան - «Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Ս. Մաթևոսյան - «Լիկվոր» դեղագործական ընկերություն» ՍՊԸ-ի տնօրեն
- Է. Սողոմոնյան - «Հայաստանի Բանկերի Միություն» իրավաբանական անձանց միության նախագահ
- Ս. Բեկիրսկի - «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն

Հրավիրվածներ՝

- Ա. Շահնազարյան - ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ
- Ա. Բեյբության - ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
- Մ. Թումասյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
- Ա. Ղազարյան - «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ
- Գ. Մակարյան - «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների)

- միություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն
- Դ. Աթանեսյան - «Ամերիկյան առևտրի պալատը Հայաստանում» իրավաբանական անձանց միության նախագահ
- Ռ. Շահմուրադյան - «Շինանյութ Ներկրողների Միություն» հասարակական կազմակերպության նախագահ
- Ս. Բարեյան - «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ-ի խորհրդատվական բաժնի ղեկավար
- Կ. Գրիգորյան - Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի տնտեսագետ
- Լ. Հարությունյան - Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ավագ խորհրդատու
- Ս. Ղոնախյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
- Ս. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
- Վ. Ճուղուրյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
- Ժ. Արամյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության պետ
- Հ. Ասլանյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր իրավաբան
- Մ. Մելիքյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի հասարակայնության հետ կապերի մասնագետ
- Հ. Տորտիկյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Օ. Հայրապետյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Գասպարյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

1. ՀՀ վարչապետի ս/թ հոկտեմբերի 14-ի N 854-Ա որոշմամբ գործարարության աջակցման խորհրդի կազմում նոր անդամների հերթական ռոտացիայի մասին

(Ռ. Հարությունյան)

2. Գործարարության աջակցման խորհրդի շրջանակներում թեմատիկ աշխատանքային խմբերի ձևավորման անհրաժեշտության և սկզբունքների մասին

(Վ. Ներսիսյանց)

3. Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի բարելավման և զարգացման վերաբերյալ առաջարկությունների քննարկումների մասին

(Ռ. Հարությունյան,  
Խորհրդի անդամներ)

4. Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականների ծրագրի, ինչպես նաև գործողությունների (միջոցառումների) ցանկի և ժամանակացույցի վերաբերյալ առաջարկությունների քննարկումների մասին

(Ռ. Հարությունյան,  
Խորհրդի անդամներ)

5. Տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման խնդիրների մասին

(Ռ. Հարությունյան,  
Խորհրդի անդամներ)

1. ՀՀ վարչապետի ս/թ հոկտեմբերի 14-ի N 854-Ա որոշմամբ գործարարության աջակցման խորհրդի կազմում նոր անդամների հերթական ռոտացիայի մասին

---

(Ռ. Հարությունյան, Ա. Ղազարյան, Տ. Սարգսյան)

1. Ընդունել ի գիտություն «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, գործարարության աջակցման խորհրդի քարտուղար Ռ. Հարությունյանի հաղորդումը ՀՀ վարչապետի ս/թ հոկտեմբերի 14-ի N 854-Ա որոշմամբ գործարարության աջակցման խորհրդի կազմում նոր ութ անդամների հերթական ռոտացիայի մասին:

2. Ընդունել ի գիտություն «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Ղազարյանի

առաջարկությունը, հետագայում, սահմանված կարգով գործարարության աջակցման խորհրդի կազմում միությանը մշտական հիմունքներով ներառելու նպատակահարմարության վերաբերյալ:

2. Գործարարության աջակցման խորհրդի շրջանակներում թեմատիկ աշխատանքային խմբերի ձևավորման անհրաժեշտության և սկզբունքների մասին

(Վ. Ներսիսյանց, Ռ. Հարությունյան, Գ. Արզումանյան, Տ. Սարգսյան)

3. Ընդունել ի գիտություն ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, գործարարության աջակցման խորհրդի փոխնախագահ Վ. Ներսիսյանցի հաղորդումն այն մասին, որ խորհրդի անդամների շրջանում խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում խորհրդի աշխատանքները կազմակերպելու առումով առկա են երկու տեսակետներ. խորհրդի գործարար համայնքը ներկայացնող անդամներից և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներից ձևավորել մշտական գործող թեմատիկ աշխատանքային խմբեր կամ բարձրացված որևէ հարցի շուրջ քննարկումներ կազմակերպելու համար քարտուղարության միջոցով ստեղծել ժամանակավոր աշխատանքային խմբեր:

4. Սահմանել, որ այսուհետ գործարարության աջակցման խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում գործարարության աջակցման խորհրդի անդամների, պետական մարմինների, այլ շահագրգիռ կազմակերպությունների կամ խորհրդի քարտուղարության նախաձեռնությամբ բարձրացված հարցերի շուրջ քննարկումներ կազմակերպելու համար գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության միջոցով կարող են ստեղծվել տվյալ հարցին շահագրգիռ խորհրդի անդամներից, այլ մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված ժամանակավոր աշխատանքային խմբեր:

3. Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի բարելավման և զարգացման վերաբերյալ առաջարկությունների քննարկումների մասին

(Ռ. Հարությունյան, Գ. Արզումանյան, Զ. Հարությունյան, Է. Գրիգորյան, Ա. Ղազարյան,  
Ա. Շահնագարյան, Տ. Դավթյան, Տ. Սարգսյան)

5. Ընդունել ի գիտություն Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի բարելավման և զարգացման վերաբերյալ գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքի անդամների և գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից

արված առաջարկությունների վերաբերյալ պետական մարմիններում քննարկումների արդյունքները:

6. «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Ղազարյանին՝ ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6՝ հոդվածի 1-ին կետով սահմանված ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների անվանացանկի փոփոխման և լրացման անհրաժեշտությունը, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում շարունակել աշխատանքները վերոհիշյալ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով առաջարկությունները ձևավորելու և հետագայում, սահմանված կարգով, ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու համար:

7. ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Ս. Դավթյանին՝ ընդունելով ի գիտություն «Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Զ. Հարությունյանի և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի առաջարկությունները, մեկ շաբաթյա ժամկետում, կրկին անգամ Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի քննարկմանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված և շրջանառության մեջ դրված «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվում է համապատասխանեցնել ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության ծագման պահի և ավելացված արժեքի հարկի գծով հաշվանցումներ կատարելու իրավունքի ստացման պահի որոշման սկզբունքները (առաջարկվում է երկու դեպքում էլ կիրառել հաշվառման հաշվեգրման մեթոդը):

8. Ընդունել ի գիտություն «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի հաղորդումն այն մասին, որ Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի բարելավման և զարգացման վերաբերյալ գործարար համայնքի անդամների և գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից արված առաջարկությունների վերաբերյալ պետական մարմիններում բավարար քննարկումներ չեն կազմակերպվել և դրական մոտեցումներ չեն ցուցաբերվել, և հետագայում գործարարների կողմից բարձրացված հարցերի և առաջարկությունների նկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել փոխհամաձայնության հասնելու իրական պատրաստակամություն՝ խուսափելով գործարարների կողմից ներկայացվող առաջարկությունների շուրջ բովանդակային քննարկումները շրջանցող նամակագրությունից:

9. Ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ Ս. Սարգսյանի հաղորդումն այն մասին, որ 2009թ.-ից սկսած ՀՀ կառավարությունը էապես վերանայելու է ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի ավելացված արժեքի հարկի գումարներն այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման գործընթացի քաղաքականությունն ու վարչարարությունը, մասնավորապես՝ 2009թ.-ից սկսած կրճատվելու են գումարների հաշվանցման կամ վերադարձման ժամկետները, 2009թ.-ի ընթացքում սահմանված կարգով մարվելու են մինչև 2009թ.-ին կուտակված հաշվանցման կամ վերադարձման ենթակա պարտքերը և 2009թ.-ի ընթացքում նոր և ընթացիկ պարտքեր չեն կուտակվելու, ինչպես նաև 2010թ.-ից սկսած ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցման կամ ետ վերադարձման ուշացման դեպքում պետությունը նախատեսում է վճարել տույժեր:

10. ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Ս. Դավթյանին՝ ընդունելով ի գիտություն «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի առաջարկությունը պետության և հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված պարտավորությունների չկատարման դեպքում նույնական մոտեցումներ ցուցաբերելու անհրաժեշտության մասին, քննարկել 2010թ.-ից սկսած ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցման կամ ետ վերադարձման ուշացման դեպքում պետության կողմից վճարման ենթակա տույժերի և հարկ վճարողների կողմից հարկերի վճարումն ուշացնելու համար վճարման ենթակա տույժերի չափերը համապատասխանեցնելու հնարավորության հարցը և առաջարկություն ներկայացնել Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդին:

11. Ընդունել ի գիտություն «Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Զ. Հարությունյանի առաջարկությունը՝ ավելացված արժեքի հարկի օրենքի հավելված 1-ի 22-րդ կետի համաձայն օրենքով սահմանված կարգով կատարված հաշվանցումների (հարկային մարմնի կողմից հաշվառվող բոլոր հարկային պարտավորությունների մարման) արդյունքում առաջացած հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի մնացորդը հարկ վճարողի ցանկությամբ ներմուծված ապրանքների մատով մաքսային մարմիններին վճարման ենթակա հարկերի գծով պարտավորությունների մարմանն ուղղելու ընթացակարգերը ՀՀ կառավարության կողմից սահմանելու անհրաժեշտության և հրատապության մասին:

12. ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Ս. Դավթյանին՝ ընդունելով ի գիտություն «Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Զ. Հարությունյանի և «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ.

Արգումանյանի առաջարկությունները, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ, ներկայացնել առաջարկություն հարկ վճարողի մոտ այլ հարկատեսակների հաշվին գերավճարի գումար հաշվանցման դիմումի առկայության պայմաններում, նախքան օրենքով սահմանված կարգով այդ դիմումի հիման վրա ուսումնասիրության անցկացումը, դիմումում նշված՝ հաշվանցման ենթակա գումարի մասով հարկային պարտավորությունների գանձումից (այդ թվում նաև՝ հարկ վճարողի բանկային հաշիվների արգելանք դնելու միջոցով) ձեռնպահ մնալու նպատակահարմարության վերաբերյալ:

13. ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Ս. Դավթյանին՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ Ս. Սարգսյանի հաղորդումն այն մասին, որ շահութահարկի գծով 1% կանխավճարների համակարգի փոփոխության հարցը ապագայում գտնվելու է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում՝ ներկայացնել առաջարկություն շահութահարկի գծով 1% կանխավճարների համակարգի վերացման ժամկետի հարցը օրենսդրորեն սահմանելու հնարավորության վերաբերյալ:

14. Ընդունել ի գիտություն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Ա. Շահնազարյանի առաջարկություններն գործարարության աջակցման խորհրդի առաջիկա նիստերից մեկում տնտեսական մրցակցության խնդիրների վերաբերյալ քննարկումումներ կազմակերպելու անհրաժեշտության, ինչպես նաև այն մասին, որ ընդհանրապես ՀՀ օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելիս պետք է նախատեսել, որ դրանք լինել ամբողջական և տարածվեն կարգավորման ենթակա համանման խնդիրներ ունեցող բոլոր ոլորտների վրա:

4. Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականների ծրագրի, ինչպես նաև գործողությունների (միջոցառումների) ցանկի և ժամանակացույցի վերաբերյալ առաջարկությունների քննարկումների մասին

---

(Ռ. Հարությունյան, Գ. Արգումանյան, Է. Սողոմոնյան, Ս. Դավթյան, Ս. Սարգսյան)

15. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականների ծրագրի, ինչպես նաև գործողությունների (միջոցառումների) ցանկի և ժամանակացույցի վերաբերյալ գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքի անդամների և գործարարության աջակցման խորհրդի

քարտուղարության կողմից արված առաջարկությունների վերաբերյալ պետական մարմիններում քննարկումների արդյունքները:

16. «Հայաստանի Բանկերի Միություն» իրավաբանական անձանց միության նախագահ Է. Սողոմոնյանին՝ բանկերի միության կողմից բանկային համակարգում ավելացված արժեքի հարկի կիրառման գործընթացում ծագած խնդիրների վերաբերյալ անցկացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա ամփոփել գործընթացի բարելավման ուղղված առաջարկությունների փաթեթը և ներկայացնել Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի քննարկմանը:

17. ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Ս. Դավթյանին՝ լսելով «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի առաջարկությունները հարկային և մաքսային մարմինների աշխատակիցների խրախուսման համակարգը հարկային և մաքսային օրենսդրության և վարչարարության կատարումը ճշգրիտ պահպանելու հետ փոխկապակցելու, հարկային և մաքսային մարմինների աշխատակիցների վարձատրության պատշաճ մակարդակը ապահովելու, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Ս. Դավթյանի հաղորդումը՝ 2009թ.-ին ՀՀ կառավարության կողմից հարկային և մաքսային մարմինների աշխատակիցների վարձատրության բարձրացումը նախատեսելու վերաբերյալ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ քննարկել հարկային մարմինների նյութական խրախուսման ֆոնդի եկամուտների և հարկային իրավախախտումների արդյունքում պետական բյուջե հավաքագրված գումարների միջև գործող ուղղակի կապի վերացման հարցը և առաջարկություն ներկայացնել Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդին:

18. Ընդունել ի գիտություն «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի առաջարկություններն այն մասին, որ մինչև եկամուտների համընդհանուր հայտարարագրման նախատեսվող համակարգի ներդրումը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել պետական բարձրաստիճան պաշտոնյաների եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգի կիրառման փորձը և դրա հիման վրա նախատեսել նոր համակարգի ներդրման արդյունավետությունն ապահովելու լրացուցիչ միջոցառումներ:

5. Տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման խնդիրների մասին

---

(Ռ. Հարությունյան, Է. Գրիգորյան, Է. Սողոմոնյան, Ս. Բեկիրսկի, Ա. Ղազարյան, Տ. Սարգսյան)



19. Ընդունել ի գիտություն «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, գործարարության աջակցման խորհրդի քարտուղար Ռ. Հարությունյանի հաղորդումը վերջին շրջանում բանկերի կողմից տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման գործընթացում ծագած խնդիրների վերաբերյալ:

20. Ընդունել ի գիտություն «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ Է. Գրիգորյանի, «Հայաստանի Բանկերի Միություն» իրավաբանական անձանց միության նախագահ Է. Սողոմոնյանի, «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Ս. Բեկիրսկու, «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Ղազարյանի հաղորդումները՝ գլոբալ տնտեսական ճգնաժամի պայմաններում գործող և նոր ստեղծվող ձեռնարկություններին, ինչպես նաև տնտեսության ճյուղերի զարգացմանը ՀՀ կառավարության կողմից կոնկրետ և գործուն աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտության և հրատապության վերաբերյալ:

21. Ընդունել ի գիտություն «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Ղազարյանի առաջարկությունն այն մասին, որ հարկային և մաքսային բարեփոխումների ինտենսիվ իրականացման, ինչպես նաև գլոբալ տնտեսական ճգնաժամի պայմաններում նպատակահարմար չէ և անհրաժեշտ է ժամանակավորապես հրաժարվել կազմակերպությունների հարկային հաշիվներին կալանք դնելու պրակտիկայից, ինչն էլ ավելի է վատթարացնում ձեռնարկությունների տնտեսական գործունեությունը, առաջացնում է ժամանակավոր գործազրկության և կոռուպցիոն ռիսկեր, էապես վնասում է հատկապես արտահանող կազմակերպությունների վարկանիշին, որոնք այժմ դժվարություններ են կրում ճգնաժամի պատճառով արտերկրյա գնորդների անվճարունակության կամ վճարումների ուշացումների հետևանքով:

22. Ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ Տ. Սարգսյանի դիմումը գործարար համայնքին՝ կրկին անգամ վերահաստատելու ՀՀ կառավարության պատրաստակամությունը՝ աջակցելու բոլոր այն գործնական առաջարկություններին և հիմնավորված ծրագրերին, որոնք կներկայացվեն օժանդակություն ստանալու ակնկալիքով:

23. Ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ Տ. Սարգսյանի հաղորդումն այն մասին, որ գլոբալ տնտեսական ճգնաժամի պայմաններում կառավարության ջանքերն ուղղված են լինելու մակրոտնտեսական և ֆինանսական հատվածի կայունության ապահովմանը, ծրագրավորված տնտեսական աճ

ապահովելու համար՝ լրացուցիչ խթանների բացահայտմանը և ներդրմանը, ինչպես նաև ճգնաժամի ազդեցությունը մեղմելու և իրական հատվածի զարգացումը խթանելու նպատակով կառավարությունը ձեռնարկելու է լրացուցիչ քայլեր աջակցելու գործող և նոր ստեղծվող ձեռնարկություններին՝ ֆինանսական միջոցների ներգրավման համար պետական երաշխիքների տրամադրման, սուբսիդավորման գործիքների կիրառման, կառավարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխանող ձեռնարկությունների կապիտալում պետության մասնակցության միջոցով, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումը խթանելու նպատակով Համաշխարային Բանկի, Հայ-գերմանական հիմնադրամի, ԵԲ, Ասիական Բանկի օժանդակությամբ ձեռնարկվելու են մեծածավալ վարկային միջոցների հասանելիության ապահովում, հարկային վարչարարության էական պարզեցում, մասնավորապես՝ մինչև 100մլն. դրամ շրջանառություն ունեցող ձեռնարկությունների համար հաշվապահական հաշվառման վարման պարտադիր կանոնի վերացում և պարզեցված հարկային հաշվետվությունների ներդրում, ինչպես նաև ձեռնարկությունների բիզնես ծրագրերի մշակմանն աջակցություն և մի շարք այլ միջոցառումների իրականացում:

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ,  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

S. ՍԱԳՍՅԱՆ

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռ.